

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 1/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱՐԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

«Ամերիաբանկ» ՓԲԸ
+37410 561111, office@ameriabank.am

«Փարթներ», «Պրեմիում» և «Պերսոնա» փաթեթների ներքո «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Բանկ) հաճախորդների հետ համագործակցությունը և սպասարկումն անհատականացնելու նպատակով սույն փաստաթղթով սահմանվում են Անհատականացված փաթեթների պայմանները («Փարթներ»/ «Պրեմիում»/ «Պերսոնա»):

Սույն պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված)՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ»-ով՝ նախատեսված եղանակով Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի ստորագրած/վավերացրած համապատասխան հայտը (հայտ-պայմանագիրը) Բանկ ներկայացվելու պահից:

1. «Պրեմիում» և «Փարթներ» փաթեթների համար սահմանված չափանիշներ՝

Հաճախորդի կամ հաճախորդի և իր ընտանիքի անդամների՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող հաշիվների և/կամ պարտատոմսերի միջին կիսամյակային ¹ մնացորդը կազմում է նվազագույնը 120 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք գումար	«Փարթներ» ^{1,2}
Հաճախորդի կամ հաճախորդի և իր ընտանիքի անդամների՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող հաշիվների և/կամ պարտատոմսերի միջին կիսամյակային ¹ մնացորդը կազմում է նվազագույնը 40 միլիոն ՀՀ դրամ կամ դրան համարժեք գումար	«Պրեմիում» ^{1,2}

¹ Հաճախորդի կողմից փաթեթին դիմելու դեպքում և վճարման չափի վերաբերյալ պայմանը որոշելիս սույն պայմաններով սահմանված մնացորդը և շրջանառությունը դիտարկելիս հիմք է ընդունվում փաթեթի դիմելու պահին նախորդող համապատասխան ժամանակահատվածը:

² «Փարթներ» և «Պրեմիում» սպասարկման փաթեթները կարող են տրամադրվել նաև հաճախորդի ընտանիքի անդամներին՝ հորը/մորը, ամուսնուն/կնոջը և երեխաներին:

¹ «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ»/11RBD RL 72-01-01/, ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ. <https://ameriabank.am/useful-links>

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 2/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՅՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱՐԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

2. Փաթեթի սպասարկման վճար³

2.1. «Պերսոնա» փաթեթ

Պայման	Փաթեթի վճար
Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի կողմից «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող հաշիվներով իրականացրած միջին ամսական կրեդիտային շրջանառությունը ¹ (մուտքային գործարքները՝ բացառությամբ Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների) 400,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք գումար է	10,000 ՀՀ դրամ՝ օրացուցային կիսամյակի համար (զանձվում է օրացուցային կիսամյակին հաջորդող օրացուցային կիսամյակի առաջին ամսվա ընթացքում)
Օրացուցային կիսամյակի ընթացքում հաճախորդի կողմից «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող հաշիվներով իրականացրած միջին ամսական կրեդիտային շրջանառությունը ¹ (մուտքային գործարքները՝ բացառությամբ Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների) 400,000 ՀՀ դրամից կամ դրան համարժեք գումարից պակաս է	20,000 ՀՀ դրամ՝ օրացուցային կիսամյակի համար (զանձվում է օրացուցային կիսամյակին հաջորդող օրացուցային կիսամյակի առաջին ամսվա ընթացքում)

³ Հաճախորդը կարող է օգտվել փաթեթից վերոնշյալ Աղյուսակով սահմանված պայմանների համաձայն՝ համապատասխան սպասարկման վճարի դիմաց: Տվյալ օրացուցային կիսամյակում բացված հաճախորդների համար սպասարկման վճարի գանձումը սկսվում է հաջորդ օրացուցային կիսամյակից: Օրացուցային կիսամյակի ընթացքում փաթեթի շրջանակներում համագործակցելու նպատակով Բանկի հետ գործարար հարաբերություն հաստատած այն հաճախորդներից, ում հետ կնքված հայտ-պայմանագիրը կդադարի նույն օրացուցային կիսամյակի ընթացքում և/կամ ավարտին, կգանձվի սպասարկման վճար տվյալ օրացուցային կիսամյակի համար ամբողջությամբ: Օրացուցային կիսամյակի ընթացքում «Պերսոնա» փաթեթի շրջանակներում համագործակցելու նպատակով Բանկի հետ գործարար հարաբերություն հաստատած հաճախորդներից, ում հետ կնքված հայտ-պայմանագիրը կդադարի հաջորդող օրացուցային կիսամյակի ընթացքում, կգանձվի մեկ օրացուցային կիսամյակի համար Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարն ամբողջությամբ:

2.2. «Փարթներ» և «Պրեմիում» փաթեթներ

	«Պրեմիում»	«Փարթներ»
--	-------------------	------------------

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 3/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱՐԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

Հաշվի բացման կամ հետագա սպասարկման ընթացքում հաճախորդը համապատասխանում է սահմանված չափանիշներին	Փաթեթի վճար չի սահմանվում	Փաթեթի վճար չի սահմանվում
Հաշվի բացման կամ հետագա սպասարկման ընթացքում հաճախորդը չի համապատասխանում սահմանված չափանիշներին	Փաթեթի վճարը սահմանվում է 40,000 ՀՀ դրամ՝ օրացուցային կիսամյակի համար (գանձվում է տվյալ օրացուցային կիսամյակին հաջորդող օրացուցային կիսամյակի ընթացքում)	Փաթեթի վճար չի սահմանվում

⁴ Օրացուցային կիսամյակի ընթացքում «Պրեմիում» փաթեթի շրջանակներում համագործակցելու նպատակով Բանկի հետ գործարար հարաբերություն հաստատած այն հաճախորդներից, ում հետ կնքված հայտ-պայմանագիրը չափանիշներին անհամապատասխանության հետևանքով կդադարի նույն օրացուցային կիսամյակի ընթացքում և/կամ ավարտին և/կամ հաջորդող օրացուցային կիսամյակի ընթացքում, սպասարկման վճարի գանձում տվյալ օրացուցային կիսամյակի համար չի կատարվի:

3. Հատուկ սակագնային փաթեթ, որը ներառում է զեղչեր և արտոնյալ սակագներ և պայմաններ.

3.1. ««Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար»ⁱⁱ:

3.2. ««Ամերիաբանկ» ՓԲԸ Քարտերի սակագներ»ⁱⁱⁱ. Հաճախորդը կարող է ունենալ մեկական դեբետային և վարկային քարտ՝ ստորև նշված պայմաններով⁵:

	«Պերսոնա»	«Պրեմիում»	«Փարթներ»
--	------------------	-------------------	------------------

ⁱⁱ ««Ամերիաբանկ» ՓԲԸ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար», /11RBD PL 72-01-01/, ընդունվել է Բանկի Տնօրինության 27.05.2015թ. թիվ 03/59/15 որոշմամբ. <https://ameriabank.am/useful-links>

ⁱⁱⁱ ««Ամերիաբանկ» ՓԲԸ Քարտերի սակագներ» /11RBD PL 72-56/, ընդունվել է Բանկի Տնօրինության 29.07.2015թ. թիվ 02/20/15 որոշմամբ. <https://ameriabank.am/useful-links>

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 4/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱՐԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

ARCA/Standard/Classic	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի
Gold	Մեկ հատ առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի
Platinum	Մեկ հատ առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի
Signature	N/A	Տարեկան սպասարկման միջնորդավճարի 50% զեղչ	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի
Infinite	N/A	Տարեկան սպասարկման միջնորդավճարի 50% զեղչ	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի
ՀՀ դրամով դեբետային քարտերի համար Ամերիաբանկի բանկոմատներից կանխիկացում	0%	0%	0%
Քարտային գործարքների ապահովագրություն՝ համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ քարտային գործարքների ապահովագրության պայմանների և վերջիններիս գործողության ընթացքում:	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի	Առանց տարեկան սպասարկման միջնորդավճարի

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 5/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱՐԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

Քարտի տրամադրում բանկի մասնաճյուղերում (գանձվում է միայն նոր թողարկվող քարտերի դեպքում)	1,000 ՀՀ դրամ ⁶	Անվճար	Անվճար
--	----------------------------	--------	--------

⁵Վճարային քարտերի մյուս սակագները սահմանվում են ըստ Բանկում գործող պայմանների:

⁶Միջնորդավճարը չի գանձվում երրորդ անձի անունով բացված հավելյալ քարտերի տրամադրման համար, եթե երրորդ անձը հայտի ներկայացման պահին չի գտնվում Բանկում:

3.3. Ավանդներ⁷

	Պերսոնա	Պրեմիում	Փարթներ
Ժամեկտային ավանդների հավելյալ տոկոսադրույք	N/A	0.25% /կիրառելի է միայն 181 և ավել օր ժամկետով ավանդների համար/	0.25% /կիրառելի է միայն 181 և ավել օր ժամկետով ավանդների համար/

⁷Ավանդների հետ կապված մյուս պայմանները սահմանվում են ըստ Բանկում գործող փաստաթղթերի:

3.4. Վարկեր⁸

	Պերսոնա	Պրեմիում	Փարթներ
Վարկի տրամադրման միջնորդավճար⁸	Չի գանձվում, եթե միջնորդավճարը չի գերազանցում 50,000 ՀՀ դրամը: Հակառակ դեպքում գանձվում է 50,000 ՀՀ դրամը գերազանցող չափով:	Չի գանձվում, եթե միջնորդավճարը չի գերազանցում 50,000 ՀՀ դրամը: Հակառակ դեպքում գանձվում է 50,000 ՀՀ դրամը գերազանցող չափով:	Չի գանձվում, եթե միջնորդավճարը չի գերազանցում 50,000 ՀՀ դրամը: Հակառակ դեպքում գանձվում է 50,000 ՀՀ դրամը գերազանցող չափով:
Վարկերի արտոնյալ տոկոսադրույք			

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 6/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱՐԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

Անգրավ վարկային գիծ/օվերդրաֆտ (Բոլոր արժույթներով)	-	15% ⁹	15% ⁹
Անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման և կառուցապատման վարկեր	ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի պարագայում Ամերիաբանկում գործող տարեկան տոկոսադրույքից 0.5%-ով ցածր տարեկան տոկոսադրույքով	ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի պարագայում Ամերիաբանկում գործող տարեկան տոկոսադրույքից 1%- ով ցածր տարեկան տոկոսադրույքով	ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի պարագայում Ամերիաբանկում գործող տարեկան տոկոսադրույքից 1%- ով ցածր տարեկան տոկոսադրույքով
Ավտովարկեր	ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի պարագայում Ամերիաբանկում գործող տարեկան տոկոսադրույքից 0.5%-ով ցածր տարեկան տոկոսադրույքով	Ամերիաբանկում գործող տարեկան տոկոսադրույքից 1%-ով ցածր տարեկան տոկոսադրույքով	Ամերիաբանկում գործող տարեկան տոկոսադրույքից 1%- ով ցածր տարեկան տոկոսադրույքով
Ավանդի/պարտատոմսի գրավով ապահովված վարկեր	-	+3% մարժա	+3% մարժա

⁸Վարկերի հետ կապված մյուս պայմանները սահմանվում են ըստ Բանկում գործող փաստաթղթերի: Բանկի կողմից սքորինգային համակարգով տրամադրվող սպառողական վարկերի դեպքում վարկի տրամադրման վճար չի գանձվում, բացառությամբ այն դեպքի, երբ վարկային հայտը ներկայացվում է Բանկի գրասենյակում, որի համար կիրառվում է տրամադրման վճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, առավելագույնը 10,000 ՀՀ դրամ:

⁹Եթե ավելի արտոնյալ տոկոսադրույք սահմանված չէ տվյալ քարտատեսակով:

3.5. Այլ ծառայություններ

3.5.1. Պերսոնա փաթեթի շրջանակներում.

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 7/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱԹԵԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

Պահատույթներ	Սակագին
Պահառության պայմանագիրը ցանկացած ժամանակահատվածով՝ բացառությամբ 1 տարի ժամկետով կնքելիս	20% զեղչ
Պահառության պայմանագիրը 1 տարով կնքելու պարագայում	30% զեղչ

3.6. Անվճար MyAmeria ծառայության տրամադրում:

4. Անհատականացված սպասարկում

	Պերսոնա	Պրեմիում	Փարթներ
Հաճախորդի մենեջերի կցվածություն	Ոչ	Պրեմիում/Փարթներ մենեջեր	Պրեմիում/Փարթներ մենեջեր
Հաճախորդի մենեջերի հետ նախնական պայմանավորվածության հնարավորություն	Ոչ	Այո	Այո
Արտահերթ սպասարկման հնարավորություն	Ոչ	Այո	Այո
Բանկի աշխատանքային ժամերի ընթացքում, բանկային օրվա ավարտից հետո սպասարկման հնարավորություն (համաձայն հաճախորդի հետ նախնական պայմանավորվածության)	Ոչ	Այո	Այո
Հատուկ սպասարկման սրահ՝ սահմանափակ հասանելիությամբ, կանխիկով գործարքների իրականացման հնարավորությամբ	Ոչ	Այո	Այո

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 8/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱԹԵՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

Հաճախորդի գրասենյակում սպասարկման հնարավորություն	Ոչ	Այո	Այո
Հաճախորդների տվյալ փաթեթին պատկանելիությունը իդենտիֆիկացիա	Փաթեթի անվանագրում GOLD/ PLATINUM քարտի վրա	Փաթեթի անվանագրում GOLD/PLATINUM քարտի վրա	Փաթեթի անվանագրում INFINITE քարտի վրա
Ղեկավարների հետ պարբերական հանդիպումներ	Ոչ	Բանկի Միջին/Բարձր օղակի ղեկավարներ՝ առնվազն տարին մեկ անգամ	Բանկի/Խմբի Բարձր օղակի ղեկավարներ՝ առնվազն տարին մեկ անգամ: Բջջային հեռախոսահամարների տրամադրման հնարավորություն
Բանկի կողմից կազմակերպվող և ֆինանսավորվող նշանակալից միջոցառումներին մասնակցություն՝ վաճառքի համար չնախատեսված լավագույն 2 տոմսի տրամադրում	Ոչ	Հաճախորդի մենեջերի ներկայացման հիման վրա «Հաճախորդների քաղաքականությամբ» (11RBD/12CIB P 72-01) սահմանված համապատասխան իրավասություն ունեցող անձի հաստատմամբ	Այո
Ֆորումների, սեմինարների և նոր ծառայությունների շնորհանդեսների մասին տեղեկացում և մասնակցության հնարավորություն:	Հաճախորդի մենեջերի ներկայացման հիման վրա «Հաճախորդների քաղաքականությամբ» (11RBD/12CIB P 72-01) սահմանված համապատասխան	Հաճախորդի մենեջերի ներկայացման հիման վրա «Հաճախորդների քաղաքականությամբ» (11RBD/12CIB P 72-01) սահմանված համապատասխան	Այո

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD LI 72-01-03	Էջ 9/9
ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՎԱԾ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ («ՓԱՐԹՆԵՐ»/ «ՊՐԵՄԻՈՒՄ»/ «ՊԵՐՍՈՆԱ»)		Խմբագրություն 12	
		Ուժի մեջ է՝ 07.06.2023թ.-ից	

	իրավասություն ունեցող անձի հաստատմամբ	իրավասություն ունեցող անձի հաստատմամբ	
Ծննդյան և տոն օրերի նվերների առկայությամբ շնորհավորանքներ	Հաճախորդի մենեջերի ներկայացման հիման վրա «Հաճախորդների քաղաքականությամբ» (11RBD/12CIB P 72-01) սահմանված համապատասխան իրավասություն ունեցող անձի հաստատմամբ	Հաճախորդի մենեջերի ներկայացման հիման վրա «Հաճախորդների քաղաքականությամբ» (11RBD/12CIB P 72-01) սահմանված համապատասխան իրավասություն ունեցող անձի հաստատմամբ	Այո
Բանկի ծառայությունների մատուցում պարզեցված պայմաններով և սեղմ ժամկետներում (օր՝ . անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում վարկի տրամադրում առավելագույնը երեք բանկային օրվա ընթացքում):	Ոչ	Այո	Այո
Անհրաժեշտության դեպքում վարկային քարտի սահմանաչափի շտապ բարձրացում	Ոչ	Այո	Այո

5. Այլ արտոնություններ՝ Բանկի հետ համագործակցող ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակաում նախատեսված լինելու դեպքում: